ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՕԳՈՍՏՈՍԻ 2022 թվականի N 260-Ա

ԱՐՄԻՆԵ ՇԱԼԻԿՈՅԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՊԱՏՐՈՆ /ՕԳՆԱԿԱՆ/ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածի դրույթով և հիմք ընդունելով Ալավերդու համայնքապետարանի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով»-ի 29.07.2022 թվականի արձանագրությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի քաղաքի Սայաթ-Նովա 10/9 հասցեի բնակիչ Արմինե Շալիկոյի Սահակյանին նշանակել քաղաքացի Մարգո Ամբակի Սահակյանի /ծնված՝ 24.03.1942թ./ պատրոն /օգնական/:
2. Արմինե Շալիկոյի Սահակյանին իրավունք վերապահել ստանալու և տնօրինելու Մարգո Ամբակի Սահակյանին հասանելիք թոշակը, նպաստը և դրամական այլ մուտքերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. օգոստոսի 01
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՕԳՈՍՏՈՍԻ 2022 թվականի N 261-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Սերգո Դուրմիշի Քառյանի դիմումը, սեփականության իրավունքի N 816771 վկայականը, Հաղպատ գյուղի վարչական ղեկավարի կողմից 01.08.2022թ. տրված N 894 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

Սերգո Դուրմիշի Քառյանին սեփականության իրավունքով պատկանող, Լոռու մարզի Հաղպատ գյուղում գտնվող, 06-060-0038-0004 ծածկագրով, 0.188 հա մակերեսով տնամերձին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, 10-րդ փողոց, 10 հողամաս փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. օգոստոսի 02
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՕԳՈՍՏՈՍԻ 2022 թվականի N 262-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 10.06.2022թ. N 193-Ա, 15.07.2022թ. N 240-Ա որոշումները, սեփականության իրավունքի N 29072022-06-0038 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Ժորա Վերանյանն ընդունել է ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ջրավազան փողոց, 69/2 ավտոտնակ հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 10.06.2022թ. N 193-Ա, 15.07.2022թ. N 240-Ա որոշումներով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 65.9 քմ արտաքին մակերեսով (55.1 քմ ներքին մակերեսով) ավտոտնակը՝ 48964 (քառասունութ հազար ինը հարյուր վաթսունչորս) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.00659 հա մակերեսով հողամասը՝ 22182 (քսաներկու հազար հարյուր ութսուներկու) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Ժորա Վերանյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. օգոստոսի 02
ք. Ալավերդի